ման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ քոյ լինիլ 'ի տանն հայոց, տուաք քեզ նամակ շնորհաց և պաշտօն երկրաչափութեան ժամանակաւ երիս ամաւ, զի Տեառն Ստեփաննոս գողթանու իշխեսցես 'ի երեսս երկրին հայաստանեաց չափելոյ, և տուաք իշխանութիւն քեզ չափելով բաժանեսցես ըստ իւրաքանչ յաշխարհ յաշխարհէ, գաւառ 'ի գաւառէ, և հաստատեսցես վիճակ քաղաքաց, վանօրէից ըստ Օրինաց և տուեցելոց և խոստմանց տանէն հայոց, և բայցայայտնեսցես 'ի յերեսս թղթոյ բոլոր երկիրն հայաստանեաց մէջ սահմանի իւրեանց լերամբ, անտառիւք, լճակաւ, գետօրէիւք, աղբիւրօք և այլն, տուաք իշխանութիւն քեզ, զի արգելեսցես ամենեցւոյն ով որ որ իցէ, որ յօրինել կամեսցի տուն եթէ գտցի կամք նորայ արտաքոյ սովորութեան հայոց և 'ի դրունս շարից և կամ մերձ ամենայն ամրոցաց և բերթօրէից և ամենայն ամրոցի վիճակէ, և միշտ պահել պարտէ քեզ մերձ ամենայն մայրաքաղաքաց դաշտ մի լայն արձակ 'ի վերայ քաղցր ջրոյ վասն իջանելոյ 60 հազար զինուորս, և միոք 'ի տեղին յայնմիկ շինեսցի տուն և տնկեսցի այգիս, և տուաք իշխանութիւն քեզ 'ի ծախիւք տանէն հայոց բանալ ճանապարհս մերձազնացս, և խորտակել բլուրս, եթէ գուցէ արժանի շահաւէտութեան անցուցանել ջուր 'ի մի տեղէ առ միւս, և պատուիրեմք